ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2011 թվական թիվ 118-Ա

<<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի <<Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 1030-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1153-Ն որոշումը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման փոխնախարարի 2011 թվականի օգոստոսի 6-ի թիվ 01/15/5108-11 գրության պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի <<Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի թիվ 1030-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1153-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությանի 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ ընթացիկ դրամաշնորհներ> հոդվածով) հատկացված 6329.4 հազար դրամ գումարից 2500.0 հազար դրամ գումարն ուղղել <Լավագույն մարզական ընտանիք> միջոցառման մասնակցությանը՝ անհրաժեշտ մարզահագուստի ձեռք բերման, կեցության և տրանսպորտային ծախսերի իրականացման նպատակով, համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Մարզպետարանի գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանին՝ նախատեսված գումարը սահմանված կարգով հատկացնել <Լավագույն մարզական ընտանիք> միջոցառման մասնակցության համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

26 օգոստոսի 2011 թ.
ք. Իջևան

Հավելված 1

ՀՀ Տավուշի մարզպետի 2011 թ. օգոստոսի 26-ի թիվ 118-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար ''Լավագույն մարզական ընտանիք'' մրցույթի եզրափակիչ փուլին ՀՀ Տավուշի մարզի թվով ինը ընտանիքների և մեկ պատասխանատուի մասնակցության

h/h	Ծախսերի անվանումը	Գինը /հազար դրամ/	Քանակը	Մասնակից-ների թիվը	Օրը	Գումարը /հազար դրամ/
1	Մարզահագուստ	25.0	28		-	700.0
2	Ճանապարհածախս, այդ թվում ա/ Իջևան - Ծաղկաձոր Իջևան բ/ Տարածաշրջանից /Բերդ, Նոյեմբերյան/ մարզկենտրոն					120.0
3	Գիշերավարձ և սնունդ	10.0	-	28	6	1680.0
	Ընդամենը	**X**	**X**	**X**	**X**	**2500.0**

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյան